Քաղաքապետարանի կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի գլխավոր վարչություն
ՀՈՍԿԵ ԳՈՂԹԱՄԱՍԻ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՎԱՐՈՒՄ
Գրանցված է սահմանված կարգով
Գրանցման N 000345 «ԵՐ» գրանցումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 5-ին

ք. Երևան, Հ. Գալստյանի անվ. թիվ 83 ավագ դպրոց

## Դասղեկի աշխատանքային պլան

## 2023– 2024 ուս. տարի

## 11.3– րդ դասարան
## Դասղեկ՝ Է. Միկիչյան

## Դասարանի ընդհանուր բնութագիր

**11.3 դասարանում սովորում է 26 աշակերտ/14 տղա 12 աղջիկ/**

**Որպես նոր կազմավորված դասարան շատ համախմբված և կազմակերպված աշակերտներ են: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, աշակերտները համերաշխ, աշխատասեր և ընկերասեր են: Ունենք բարձր առաջադիմությամբ սովորող երեխաներ: Հարգալից են ուսուցիչների և շրջապատի մարդկանց հանդեպ: Ունեն պատասխանատվության զգացում:**

1. <u>Հոգևոր դաստիարակություն</u>

   Գիտակցի հայ ժողովրդի և հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:Ունենա ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների պահպանողն ու կրողը, մտահոգվի ազգային խնդիրների լուծմամբ:Արժևորել հոգևոր առաջնորդների՝ Վազգեն Առաջին, Խրիմյան Հայրիկ դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

2. <u>Գեղագիտական դաստիարակություն</u>

   Աշակերտների մոտ պետք է զարգացնել գեղագիտական դաստիարակությունը: Ի՞նչ է գեղեցիկը.գեղեցիկը ընկալելու,գնահատելու կարողություն: Լսել աշակերտների կարծիքը գեղեցիկի մասին: Գեղեցիկ կարող է լինել աշխատանքը, վերաբերմունքը, մոտեցումը երևույթի նկատմամբ:Կարևորել էսթետիկ ճաշակի վրա ազդող գործոնների՝ ճարտարապետության քանդակագործության, նկարչության, երաժշտության դերը անհատի ձևավորման գործում:

3. <u>Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն</u>

   Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ռազմա –հայրենասիրական դաստիարակությանը:Յուրաքանչյուր անհատ պետք է գիտակցի,որ մեր բանակը մեր երկրի պաշտպանության գրավականն է,և նրա շարքերը ամուր պահելը յուրաքանչյուրիս սուրբ գործն է:Սովորողները պետք է հասկանան հայոց բանակի պատմական կոչումն ու առաքելությունը՝ որպես հայրենիքի անվտանգության ապահովման կարևոր գործոն:

4. <u>Ֆիզիկական դաստիարակություն</u>

Առողջ հոգի, առողջ մարմում: Սրանով պետք է առաջնորդվել ֆիզիկապես ամուր և ուժեղ լինելու համար: Առողջ ապրելակերպը կյանքի հիմնական նպատակն է, որի մեջ մեծ դեր ունի ֆիրզիկական դաստիարակությունը:

5. <u>Աշխատանքային դաստիարակություն</u>

Աշխատանքը հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուրն է: Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն: Յուրաքանչյուր աշխատանք գեղեցիկ է յուրովի: Միայն և միայն աշխատանքով կարելի է հասնել նպատակին, որը ցանկացած մարդու ձգտումն է: Ձևավորել սեր դեպի աշխատանքը,սիրել այն աշխատանքը որը կատարում ես,որն էլ կլինի քո հաջողության գրավականը:

6. <u>Բնապահպանական դաստիարակություն</u>

Աշակերտների հետ պետք է քննարկել գլոբալ խնդիրները, որոնք հուզում են

համայն մարդկությանը արդի ժամանակաշրջանում՝ էկոլոգիան, բնապահպանությունը: Կարևորել շրջակա միջավայրի և բնության հանդեպ պատասխանատվության զարգացումը:Առաջնորդվել << Մտածել գլոբալ, գործել լոկալ >> կարգախոսով:

7. <u>Դպրոց – ընտանիք կապը</u> Դպրոցը

պետության հիմքն է:

Ընտանիքը հանդիսանում է պետության հենասյունը, կորիզը: Ուժեղ է այն պետությունը, որն ունի առողջ, ամուր ընտանիքներ: Շատ կարևոր է կապը դպրոցի, ծնողի, աշակերտի միջև: Դա հնարավորություն է տալիս աշակերտի մոտ ձևավորել բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ծնողը պետք է տեղեկացված լինի իր երեխայի ամեն մի քայլից:Աշակերտների մոտ խորացնել այն գիտակցությունը,որ իրենց լիարժեք դաստիարակության գործում հավասարաչափ դերակատարում ունեն և ընտանիքը և դպրոցը:

**Ուսումնադաստիրարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը**

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիրարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Գիտելիքի օր։ XXI դարը գիտելիքի դար է։ | 01.09 | աշակերտ դասղեկ |
| II | Դասարանական կոլեկտիվի ձևավորում։ Նոր ուսուցիչներ։Դպրոցի դերն իմ կյանքում։ | 08.09 | դասղեկ |
| III | Զրույց. «Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները ավագ դպրոցում»։ | 15.09 | աշակերտ դասղեկ |
| IV | Կատարել քննարկում, նվիրված ՀՀ-ի անկախության տոնի կապակցությամբ։Անկախության գինը,ճանաչենք մերօրյա հերոսներին։ | 22.09 | աշակերտ դասղեկ |
| V | Հայաստանի պետական խորհրդանիշները։ | 29.09 | աշակերտ |
| VI | Զրույց. «Ես և իմ շրջապարտը» թեմայով | 06.10 | աշակերտ դասղեկ |
| VII | Աշակերտների մոտ ձևավորել. պատասխանատվության զգացում։ | 13.10 | աշակերտ դասղեկ |
| VIII | Զրույց.«Էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով։ | 20.10 | դասղեկ |
| IX | Զրույց. «Լավ և վատ սովորություններ | 03.11 | աշակերտ |
| | » թեմայով։Ի՞նչպես ձերբազատվել վատ սովորություններից | | դասղեկ |
| X | «Ո՞վ եմ ես» - կատարել ինքնավերլուծություն և ինքնաճանաչման թեստային աշխատանք։ | 10.11 | աշակերտ |
| XI | «Համացանց, նրա դերն իմ կյանքում» - թեմայի քննարկում։ | 17.11 | դասղեկ |
| XII | Զրույց.«Եթե ես լինեի առաջին դեմք, ապա>>քննարկում։ | 24.11 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XIII | Նորաձևությո<br>ուն .զրույց<br>քննարկում։ | 01.12 | աշակերտ<br>դասղեկ |
| XIV | Զրույց. «Մասնագիտական կողմնորոշում» թեմայով։ | 08.12 | դասղեկ |
| | | | |
| XV | Զրույց. «Լինել գիտակից և հանդուրժող»։ | 15.12 | աշակերտ<br>դասղեկ |
| XVI | Քննարկում նվիրված «Ընտանեկան տոներ»թեմայով։ | 22.12 | դասղեկ |
| XVII | Ազգի և բանակի միասնությունը։ | 12.01 | աշակերտ<br>դասղեկ |
| XVIII | Ինչպիսի ընկեր եմ ես։Զրույց քննարկում։ | 19.01 | աշակերտ<br>դասղեկ |
| XIX | Զրույց. «Հայոց բանակի ստեղծման և հզորացման » թեմայով։ | 26.01 | աշակերտ<br>դասղեկ |
| XX | Քննարկում. «Ո՞վ է իմ իդեալը, ո՞ւմ կցանկանայի նմանվել» թեմայով։ | 02.02 | աշակերտ<br>դասղեկ |
| XXI | Զրույց. «Կնոջ դերը պատմության, ազգի զարգացման գործում»։ | 09.02 | աշակերտ<br>դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXII | Զրույց. «Քաղաքացիական ինքնություն» թեմայով։ | 16.02 | աշակերտ<br>դասղեկ |
| XXIII | Զրույց բարոյականության վերաբերյալ։ | 23.02 | աշակերտ |
| XXIV | Քննարկում- Ի՞նչպիսի գրքեր եմ նախընտրում կարդալ։ | 01.03 | աշակերտ<br>դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXV | Մայրության և գեղեցկության տոն։Գարուն բնության զարթոնք։ | 07.03 | աշակերտ դասղեկ |
| XXVI | Ի՞նչ երաժշտություն եմ լսում։ | 15.03 | աշակերտ դասղեկ |
| XXVII | Անվտանգ համացանց։ | 22.03 | աշակերտ դասղեկ |
| XXVIII | Իմ նախասիրությունները։ | 05.04 | աշակերտ դասղեկ |
| XXIX | Եկեղեցական տոներ։Սուրբ զատիկ։ | 12.04 | աշակերտ դասղեկ |
| XXX | Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչում։ | 29.04 | աշակերտ դասղեկ |
| XXXI | Կարևոր են բոլոր մասնագիտությունները։Իմ նախընտրելի մասնագիտությունը։ | 26.04 | աշակերտ դասղեկ |
| XXXII | Զրույց. «Ի՞նչպիսի քաղաքացի եմ ես, ինչ կարող եմ անել հայրենիքիս համար»։ | 03.05 | աշակերտ դասղեկ |
| XXXIII | Զրույց մայիսյան հերոսամարտերի մասին։ | 10.05 | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Զրույց. «Ի՞նչ ձեռքբերումներ ունեցա դպրոցում»։ | 17.05 | աշակերտ դասղեկ |

## Ամբողջ տարվա ընթացքում կատարվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Դասարանի մասնակցությունը համադպրոցական, տարածքային միջոցառումներին։
2. Կազմում ենք դաստիարակչական աշխատանքների թեմատիկան։
3. **Սեպտեմբեր** Զրույց. «Մենք և մեր դասարանը»։Դասագրքերի բաշխում,դասասենյակի կահավորում։Աշակերտների մասին տեղեկությունների հավաքում։

   **Հոկտեմբեր** Ծանոթանալ հայ մշակութային – հոգևոր արժեքներին։Այցելություն թանգարան ,թատրոն։

   **Նոյեմբեր** Զրույց քննարկում ակտիվ աշակերտների և դասավանդող ուսուցիչների հետ։

   **Դեկտեմբեր** Զրույց – քննարկում ավերիչ երկրաշարժերի մասին, բնական աղետների և դրանց հետևանքների մասին։Ի՞նչպես դիմակայել բնական աղետներին։

   **Հունվար** Զրույց նվիրված հայոց բանակի ստղծման մասին։

   **Փետրվար** Զրույց. «Նվիրված ընկերասիրության » թեմայով։

   **Մարտ** Գեղեցկության տոն։

   **Ապրիլ** Մայրության տոն։

   **Մայիս** Հաղթանակների ամիսը հայ ժողովրդի համար։Ինչպես եմ ամփոփում ուսումնական տարին։

3. Աշխատանք է տարվում դժվար դաստիարակվող, սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող, ծնողազուրկ աշակերտների հետ։
4. Կատարվում են դասալսումներ։
5. Կազմակերպվում են ծնողական ժողովներ։
6. Կատարվում են անհատական աշխատանքներ ծնողների հետ։
7. Ընտրվում է դասարանի ծնողական խորհրդի կազմը։
8. Աշխատանքներ են կատարվում դասարանի ծնողական խորհրդի հետ։
9. Կազմում ենք տարեկան հաշվետվություն։